ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

29 հունվարի 2020 թվականի թիվ 4-Ա
ք. Երևան

«ՀՈՎՆԵՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ՀՈՎՆԵՏ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2020 թվականի հունվարի 22-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Բավարարել «ՀՈՎՆԵՏ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

2020թ. հունվարի 29
ք. Երևան

Հավելված
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի
2020 թվականի հունվարրի 29-ի թիվ 4-Ա որոշման

Հեռուստածրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Կինոխիտ» «Մատչ! Պլանետա»	31.12.2020թ.
«Բոկս ՏՎ» «Կինոկոմեդիա» «Ինդիյսկոյե Կինո» «Կուխնյա ՏՎ» «365 Դնեյ ՏՎ» «ՏՆՏ Մյուզիք»	31.12.2020թ.
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Դոմ Կինո» «Բոբյոր» «Վրեմյա. դալյոկոյե ի բլիզկոյե» «Տելեկաֆե» «Մուզիկա Պերվոգո»	31.12.2020թ.
«5-րդ ալիք»	անժամկետ